Հավելված N 6
ՔԿԶՆԾ Տրանշ 2 Տիչինա-Աշտարակ
ճանապարհահատվածի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 2 հողի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ հանրային լսման

(Տիչինա-Աշտարակ ճանապարհահատված)

Օրը/ժամը. 26 հուլիսի, 2016թ. 15:00-16:00

Վայրը. Երևանի Լ. Միրիջանյանի անվան №155 միջնակարգ դպրոց, Աջափնյակ վարչական շրջան

Հանդիպումը վարում էին.

Սիրաք Գյուլբուդաղյան՝ հողի օտարման և տարաբնակեցման մասնագետ, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ:

Արուս Հարությունյան՝ հողի օտարման և տարաբնակեցման մասնագետ, «Էգիս ինթերնեյշնլ» խորհրդատու կազմակերպություն:

Մասնակցում էին՝

1. Նորա Մարտիրոսյան՝ տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ,
2. Սիրաք Գյուլբուդաղյան՝ հողի օտարման և տարաբնակեցման մասնագետ, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ,
3. Հասմիկ Կարագյուլյան՝ իրավաբան, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ,
4. Արտակ Սաղաթելյան՝ մոնիթորինգի և գնահատման մասնագետ
5. Աննա Մալիկոյան՝ հաղորդակցման և հանրային կապերի մասնագետ, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ,
6. Հայկ Նորեկյան՝ նախագծող կազմակերպության նախագծող ինժեներ, «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ,
7. Արուս Հարությունյան՝ հողի օտարման և տարաբնակեցման մասնագետ, «Էգիս ինթերնեյշնլ» խորհրդատու կազմակերպություն,

8. Տիգրան Գրիգորյան՝ ՄՉՀ, Մարդահամար և Սոցիալ-տնտեսական հետազոտություն իրականացնող կազմակերպության ծրագրի ղեկավար, «Ափթայմ» ՍՊԸ,
9. Շուշան Քոչարյան՝ ՄՉՀ, Մարդահամար և Սոցիալ-տնտեսական հետազոտությունների իրականացման ղեկավար, «Ափթայմ» ՍՊԸ,
10. Զարուհի Հայրապետյան՝ տարաբնակեցման ազգային մասնագետ, Հայաստանում ԱԶԲ Առաքելություն:

Հանրային լսմանն ընդհանուր առմամբ մասնակցել են 30 ԱԵԱ՝ 5 կին և 25 տղամարդ (մասնակիցների ցանկը համապատասխան ստորագրություններով կցված է հանդիպման արձանագրությանը): Հանրային լսման մասին բոլոր ԱԵԱ-երը նախապես տեղեկացվել են հեռախոսային զանգի միջոցով, ինչպես նաև հայտարարությունը հրապարակվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում 22.07.2016թ-ին:

Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը՝

- ՀՕՏ ընթացակարգեր (ազդեցության տեսակներ, փոխհատուցման իրավունքներ և սկզբունքներ),
- Բողոքների լուծման մեխանիզմ,
- Հարց և պատասխան:

Հանդիպման բացում.

Հանդիպումը ողջույնի խոսքով բացեց Սիրաք Գյուլբուդաղյանը: Նա ԱԵԱ-երին տեղեկացրեց, որ ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 30-ի «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Հին Սիլիկյան-Աշտարակ ճանապարհահատվածում առկա որոշ գույքերի և հողատարածքների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» N683-Ն որոշմամբ (որն ուժի մեջ է մտել 2016թ. հուլիսի 23-ին) Հին Սիլիկյան-Աշտարակ ճանապարհահատվածի 34 օրինական գույքեր ճանաչվել են գերակա հանրային շահ: Համաձայն որոշման՝ ԾԻԳ-ը բոլոր սեփականատերերին կտրամադրի իրենց գույքը գերակա հանրային շահ ճանաչելու վերաբերյալ ծանուցաթերթիկներ, ինչպես նաև համապատասխան գույքի քարտեզներ, որտեղ ներկայացված կլինի թե՛ ընդհանուր, թե՛ օտարվող հատվածը: Նա նշեց, որ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ԱԵԱ-երն իրավունք կունենան դիմում ներկայացնել ԾԻԳ գրասենյակ գույքի չօտարվող մասը օտարելու պահանջով՝ հողում անելով գերակա շահի մասին օրենքի համապատասխան հոդվածի կետերին: ԱԵԱ-ի դիմումին 15 օրյա ժամկետում ԾԻԳ-ի պատասխանից հետո մեկամսյա ժամկետում ԱԵԱ-ն կարող է դիմել դատարան: Նա տեղեկացրեց նաև, որ հաջորդ քայլով կկազմվեն և կստորագրվեն գույքի նկարագրության արձանագրությունները, որոնց մեկ օրինակը ծանուցելուց հետո ԱԵԱ-երն իրավունք կունենան 10 օրյա ժամկետում բողոք ներկայացնել ԾԻԳ արձանագրության շտկման նպատակով: Դրան կհաջորդի ՀՕՏԾ-ի պատրաստումն ու վերջինիս ներկայացումը ԱԶԲ և ՀՀ կառավարության հաստատմանը, որից հետո էլ կսկսվի փոխհատուցումների տրամադրման փուլը:

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ԾԻԳ-ի հողի օտարման և տարաբնակեցման մասնագետ Սիրաք Գյուլբուդաղյանը: Նա ԱԵԱ-երին ներկայացրեց կորուստների տեսակները և դրանց փոխհատուցման սկզբունքները: ԱԵԱ-երը ծանոթացան նկարագրության արձանագրությունների ստորագրման, ծանուցման գործընթացին և կասեցման օրվա սկզբունքին:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց խորհրդատու կազմակերպության հողի օտարման և տարաբնակեցման մասնագետ Արուս Հարությունյանը: Նա ԱԵԱ-երին ներկայացրեց ողջ տրանշի համար մշակված բողոքների լուծման մեխանիզմը, մասնավորապես բողոքը դիտարկող օղակների գործառույթներն ու իրավասության շրջանակը, բողոքի ներկայացման ձևերն ու ուղիները, բողոքները դիտարկելու և դրանց պատասխանելու ժամկետները, տեղային կիզակետի ընտրության և նրա գործառույթի նշանակությունը բողոքեների լուծման մեխանիզմում:

Հարց և պատասխան՝

Հարց 1. Բաբկեն Հարությունյան
Ունեմ 1500մ ապօրինի տարածք, որի կեսն ընկնում է ճանապարհի տակ: Կարելի է կեսը սեփականաշնորհել շինության հետ միասին:

Պատասխան 1. Սիրաք Գյուլբուդաղյան- ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետ:
Դիմեք քաղաքապետարան, եթե համապատասխանում է նորմերին, ուրեմն՝ կսեփականացվի:

Հարց 2. «Հովնանյան Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ
Մեր գույքը սեփական է՝ բնակելի նշանակությամբ շինություններով, որից դուրս կա նաև ապօրինի հող, որը փոխհատուցվում է 25%-ով, բայց տեղեկանքը թաղապետարանը չի հաստատել: Սա հիմա ի՞նչ է նշանակում, քմահաճույքի խնդի՞ր, այս պահից սկսած դիմե՞նք դատարան: Ուրիշ տարբերակ չկա՞, այսինքն պետք է միայն բողոքարկե՞նք: Իմաստ ունի՞ անցնել բողոքարկման բոլոր պրոցեսներով, դա արդյունք կտա՞: Եթե թաղապետը միևնույնն է չի ստորագրելու, ապա այս պրոցեսով չանցնենք, արդարադատության ժամանակը խնայենք ու գնանք միանգամից թաղապետին դիմենք, բարիշենք, դատի տանք, ի՞նչ անենք:

Պատասխան 2. Սիրաք Գյուլբուդաղյան- ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետ:
Համաձայն հաստատված մեթոդաբանությամբ թաղապետը հաստատում է տեղեկանքը, եթե ապացուցվում է, որ հողի վրա առկա բարելավումները կատարվել են ձեր կողմից, ինչը հաստատում են նաև հարակից տարածքի 5 հարևանները: Այո, այս պահից սկսած կարող եք բողոքարկել: Մենք չենք կարող սահմանափակել դատի տալու ձեր իրավունքը և առաջարկում ենք անցնել բողոքների լուծման ներկայացված ճանապարհով:

Հարց 3. Արթուր Արշակյան
Մինչև այսօր մեզ ասում են, անկախ նրանից գույքն ապօրինի է, թե՝ոչ, մենք փոխհատուցումը ստանում ենք 115%-ով, իսկ եթե գույքն (շինություն) ապօրինի է, հողն ապօրինի է՝ փոխհատուցուը ստանում ենք 20% պակա՞ս:

Պատասխան 3. Սիրաք Գյուլբուդաղյան- ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետ:
Եթե հողն ապօրինի է, գույքն (շինություն) ապօրինի է, ապա գնահատվող արժեքից հանում ենք օրինականացման ծախսերը, որը չի կարող ավել լինել քան 20%-ը: Իսկ եթե ձեր գույքը բնակելի շինություն է, ապա կփոխհատուցվի 115%-ով, իսկ հողը՝ 25%:

Հարց 4. «Էլբատ» ՍՊԸ, Հենրիկ Բարսեղյան

Մենք կրպակ ունենք Չաուշի վրա, եթե ճիշտ հասկացա, փոխհատուցվելու է գույքի արժեքը և բիզնեսի շահույթ ասվածը:

Պատասխան 4.1 Սիրաք Գյուլբուդաղյան՝ ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետ
Եթե ձեր կրպակն անշարժ գույք է համարվում, ապա կրպակի փոխարինման արժեքն է հաշվարկվում, եթե տեղափոխման ենթակա է, ապա՝ տեղափոխման գումարը:
Պատասխան 4.2 Տիգրան Գրիգորյան՝ Ափթայմ ՍՊԸ
Էլբատն իր բիզնեսը չի կորցնում, միայն ստանում է կրպակի փոխհատուցումը որպես սեփականատեր, իսկ բիզնեսի փոխհատուցումը հաշվարկվում է միայն կրպակի ներսում գործող Ա/Զ-ի համար:
Հարց 5. Ալեքսան Հովհաննիսյան
Տարածքում ունենք շինություն, որը կառուցվել է մինչև 2001թ-ի մայիսի 15-ը: Շատ ենք դիմել, որ սեփականացնենք, բայց չենք կարողացել՝ պատճառաբանելով որ ճանապարհ է անցնելու: Շինությունը և դրան գումարած 300 մ ապօրինի հողն ինչպե՞ս է փոխհատուցվելու:

Պատասխան 5. Սիրաք Գյուլբուդաղյան՝ ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետ
Անկախ նրանից՝ երբ է կառուցվել, եթե շինությունը բնակելի է, ապա փոխհատուցվելու է 115%-ով: Հողը եթե սեփականաշնորհվի՝ կգնահատվի 115%-ով, իսկ եթե՝ ոչ, ապա 25%-ով:

Հարց 6. Ալեքսան Հովհաննիսյան
Իսկ ինչպե՞ս է հնարավոր սեփականաշնորհել:

Պատասխան 6. Սիրաք Գյուլբուդաղյան՝ ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետ
Եթե գույքը օրինականացման ենթակա է, հիմքեր կան (տեխնիկական անձնագիր, գլխավոր հատակագիծ), ներկայացրեք մեզ, ճարտարապետները կուսումնասիրեն ու ձեզ կպատասխանենք, իսկ եթե 60 հոդվածով սահմանված գույքերի մեջ է ներառված, ապա օրինականացման ենթակա չէ:

ԲՈՒՀԱԼԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ
ՄԵԹՈԴԱԿԱՆ

Հին Սիլիկյան-Աշտարակ ճանապարհահատվածի

Հանրային լսում

26.07.2016

N	Անուն Ազգանուն	Հասցե	Ստորագրություն
1	[illegible]	[illegible]	
3	[illegible]	[illegible]	
4	[illegible]	— " —	
5	[illegible]	[illegible]	
6	[illegible]	[illegible]	
7	[illegible]	[illegible]	
8	[illegible]	[illegible]	
9	[illegible]	— " —	
10	[illegible]	[illegible] 60	
11	[illegible]	[illegible] 31/8	
12	[illegible]	[illegible] 31/4	
13	[illegible]	[illegible] 48/15	
14	[illegible]	[illegible] 8/7	
15	[illegible]	[illegible] 42/10.	
16	[illegible]	[illegible] 16 15կ.	
17	[illegible]	[illegible] 16 15կ.	
18	[illegible]	[illegible] 1/11, [illegible] 53/1	
19	[illegible]	[illegible] 2/3 [illegible]	
20	[illegible]	[illegible]	
21	[illegible]	[illegible]	
22	[illegible]	[illegible]	
23	[illegible]	[illegible]	
24	[illegible]	[illegible] 1/10	
25	[illegible]	[illegible] 31/11	

26	[illegible]	[illegible]	
27			
28	[illegible]	[illegible]	
29	[illegible]	[illegible]	
30	[illegible]	[illegible]	
31	[illegible]	[illegible]	
32			
33			
34			
35			
36			
37			
38			
39			
40			
41			
42			
43			
44			
45			
46			
47			
48			
49			
50			
51			